

ԱՂՑՔ ԳՅՈՒՂԻ ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արագածոտն մարզի Աղցք գյուղի հյուսիսարևելյան մասում, ձորի հենց եզրին կառուցված համալիրը բաղկացած է քառամուկյթ տաճարից, դրա հարավային պատին հպված կիսագետնափոր դամբարանից և վերջինիս հարավային կողմում տեղադրված հուշակոթողից: Շինության հետքեր նշմարվում են նաև հուշակոթողից հարավ: Համալիրի ամենահայտնի հուշարձանը դամբարանն է: Այն տեղ է գտել Հայաստանի ճարտարապետութ-յանն ու պատկերաքանդակներին նվիրված գրեթե բոլոր ուսումնասիրութ-յուններում: Դամբարանի և պատկերաքանդակների թվադրման, ինչպես նաև քանդակների սյուժեների մեկնաբանման հետ կապված, տարբեր ան-գամ հակադիր տեսակետ ունենալով հանդերձ, ուսումնասիրողները, ա-ռանց բացառության, գտնում են, որ Արշակունի թագավորները վերա-թաղվել են դամբարանում, և այն ներկայացնում են «Արշակունիների դամբարան» անվանումով:

Թ. Թորամանյանը գտնում էր, որ դամբարանը հեթանոսական շրջանի շինություն է: Թորամանյանից հետո, անվերապահորեն ընդունված, այժմ էլ տիրապետող միակ տեսակետն այն է, թե դամբարանը քրիստոնեական շրջանի շինություն է, կառուցվել է 360-ականներին, ամենաուշը՝ 364-ին, Արշակունիներին վերաթաղելու համար: Դամբարանը Արշակունիներին վերադրելու և 364-ին կառուցված լինելու այս պնդումն ուսումնասիրող-ները ներկայացնում են իբրև պատմական փաստ: Աղցք գյուղի և Արշա-կունի թագավորների վերաթաղման հետ կապված պատմական տեղեկութ-յունները Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու վկայություններն են, ուստի խնդրին վերաբերող հատվածները բերենք առանց կրճատում-ների:

Փավստոս Բուզանդ. «Եւ զբազում բերգօք զանց առնէին, զի ոչ կա-րէին մարտնչել ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ, ի ձեռս նոցա ամուր բերգն Անի, ի Դաբանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Մերու-ժանն հնարաւորութեամբ մեքէնայէր ամուր բերդին այնմիկ: Ելանէին, ի վեր, և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անթիւ գանձս, ի բեր-դէն: Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զարշակունոյ, և խաղացուցանէին, ի գերութիւն զոսկերս թագա-ւորացն. բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարա-ցին բանալ վասն անհեզեզ սկայագործ հաստաշինած ճարտարագործ ա-րարածոցն: /.../ Եւ առ հասարակ արկանէին զնոսա, ի սուր սուսերի իւ-րեանց, և թափէին, ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց, զոր պարսիկք խազացուցեալ տանէին, ի գերութիւն յաշիւարհն Պարսից: Զի ա-սէին ըստ իւրեանց հեթանոսութեանն ըստ օրինացն, թէ վասն այսորիկ

բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց աշխարհն մեր, զի փառք թագաւորացն և բախտքն և քաջութիւնն աշխարհիս աստի զնացեալ ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն: Ապա թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զՀայաստան աշխարհին. և զոսկերս թագաւորացն Հայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր, ի գեւղն որ Աղձքն անուանին, յԱյրարատ գաւառին որ կայն, ի խինձս, ի գոգս, ի ծոցս յանձուկս, ի գժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն»¹:

Մովսես Խորենացի. «Իսկ սպարապետն Պարսից եկեալ ի Հայս ի ձեռնտու լինելոյ նախարարացն առնու զամուրն Անի, և դերէ զամենայն գանձս արքունի որ ի նմա, այլ և զոսկերս թագաւորացն. ոչ գիտեմ, թե վասն նախատի՞նս առնելոյ Արշակայ, եթէ վասն հմայից ինչ հեթանոսականաց: Զոր ապա մազթեալ նախարարացն թափեալ թաղեցին յաւանին յԱղցս, որ յոտին Արագած կոչեցեալ լերինն: Քանզի ոչ գիտացին ընտրել զոսկերս հեթանոսաց և հաւատացելոց, զի ընդ միմեանս էր խառնակեալ գերողացն, յաղագս այնր ոչ արժանի համարեցան ի գիրս սրբոցն թաղել ի Վաղարշապատ քաղաքի»: /.../ «վասն որոյ աւերեալ գերեաց զաշխարհս մեր, մինչև զոսկերս անգամ հարցն բրեաց ի գերեզմանաց»²:

Նախ նկատենք, որ երկու պատմիչների մոտ եղելութիւնը տարբեր կերպ է ներկայացված: Դիցուք, Բուզանդի մոտ Անի բերգը գրավում են Մերուժանի առաջնորդութեամբ, իսկ Խորենացու մոտ հայ նախարարների օգնութեամբ՝ պարսիկ սպարապետը: Բուզանդի մոտ Վասակ սպարապետը հազթում է պարսիկներին ու խլում ոսկորները, իսկ Խորենացու մոտ նախարարները խնդրում ու ետ են ստանում: Առկա են նաև այլ տարբերութիւններ: Մեզ հետաքրքրող խնդրի առումով էականն այն է, որ, ըստ Խորենացու, պարսիկներն առևանգել են հեթանոս և քրիստոնյա թագավորների ոսկորները, նախարարները փորձել են քրիստոնյաների ոսկորները ջոկել, որ թագեն Վաղարշապատում, սակայն չեն կարողացել և թաղել են Աղցքում: Բուզանդի մոտ որևէ խոսք չկա առևանգված ոսկորների մեջ քրիստոնյա թագավորների ոսկորների առկայութեան, դրանք իրարից գատելու և Վաղարշապատում թաղելու փորձի մասին: Ավելին, պատմիչի հստակ վկայութիւնը, որ պարսիկները բաց էին անում «Հայոց առաջին թագավորների» գերեզմանները, ինչպես նաև Սասանորդի թագավորի հիշատակումը թույլ են տալիս եզրակացնելու, որ, ըստ Բուզանդի, Աղցքում թաղված են միայն հեթանոս Արշակունիները:

Բուզանդը և Խորենացին, խոսելով թագավորական ոսկորների առևանգման ու վերաթաղման այս հիւրավի արտակարգ ու բացառիկ գեպքի մասին, որևէ տեղեկութիւն չեն հայտնում (գուցե և չգիտեն), թե պարսիկները Անի ամրոցում քանի՞ գերեզման և որ թագավորների գերեզմաններն են կողոպտել: Զարմանալի է, որ Խորենացին չի նշում հավատացյալ թագավորի գեթ մեկ անուն, թեպետ գիտի, որ իմաստալից թագված է Անիում: Իսկ Բուզանդի «բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ», իսկասլես արժեքավոր տեղե-

¹ Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ, Պատմութիւն Հայոց, գլ. ԻԴ, Թիֆլիս, 1912, էջ 219-220, 222:

² Մ ո վ ս ե ս Խ ո ռ ե ն ա գ ի, Պատմութիւն Հայոց, գլ. ԻԷ, Տիֆլիս, 1913, էջ 288, գլ. ԻԹ, էջ 293:

կուլթյունը, այս պարագայում նույնիսկ տարօրինակ է հնչում: Խնդրին առնչվող պատմական աղբյուրների քննությունը ևս հստակություն չի մտցնում նույն դեպքի մասին պատմիչների հաղորդած տարբեր տեղեկությունների պատճառներն ըմբռնելու, իսկ ամենակարևորը, դրանցից որևէ մեկը ճշմարիտ կամ գերադասելի համարելու հարցում: Այս պարագայում գործ ունենք մեզ հասած երկու եզակի վկայություն հետ. Աղցքում, ըստ Բուզանդի, վերաթաղվել են միայն հեթանոս թագավորներ, իսկ ըստ Խորենացու հեթանոս և քրիստոնյա թագավորներ:

Այժմ գանք դամբարանին: Պատմիչների հաղորդած տեղեկություններում Աղցքում նոր դամբարան կառուցելու կամ գոյություն ունեցող դամբարանում ոսկորները թաղելու մասին խոսք անգամ չկա: Դժվար չէ նկատել, որ եղած վկայությունները բացառապես վերաբերում են Աղցք բնակավայրին: Բուզանդը թագավորների թաղման մասին գրելուց հետո անմիջապես շարունակում է. «Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել զամենայն զգերութիւնս յաւերածոյն և այրեցածոյն»³:

Բարեկարգման ու շինարարական աշխատանքներին վերաբերող այս վկայության մեջ անգամ պատմիչը դամբարան կառուցելու մասին որևէ տեղեկություն չի հիշատակում:

Խորենացին հայտնում է. քանի որ չկարողացան ջոկել հավատացյալների ոսկորները, ուստի արժան չհամարեցին «ի դիրս սրբոցն թաղել ի Վաղարշապատ քաղաքի»: «Ի դիրս սրբոցն» հոգնակի ձևը և քաղաքի տարբեր մասերում երեք տարբեր վկայարանների առկայության փաստն արդեն վկայում է, որ խոսքը ո՛չ վկայարաններից որևէ մեկում թաղելուն է վերաբերում, ո՛չ էլ նոր դամբարան կառուցելուն: Պատմիչի խոսքը վերաբերում է միայն բնակավայրին սրբերի հանգստարան Վաղարշապատին: Այսպիսով, Բուզանդի ու Խորենացու մոտ որևէ ուղղակի հիշատակություն չկա Աղցքում սրբավայրի, գերեզմանոցի կամ դամբարանի գոյության, առավել ևս դամբարան կառուցելու մասին: Ավելին, պատմիչների մոտ տեղեկություն չկա, թե բնակավայրի որ մասում կամ որ հատվածում են վերաթաղել թագավորների ոսկորները, ուստի հստակ չէ անգամ խնդրո առարկա համալիրն ընդհանրապես կապ ունի՞ Արշակունիների հետ, թե ոչ:

Ուրեմն, Աղցքի դամբարանը Արշակունիներին վերադրելու ընդունված տեսակետը հերքվում է՝ իբրև պատմագրական վկայության անհիմն մեկնաբանություն արդյունք: Սրա հետ կապված, բնականաբար, հերքվում է նաև դամբարանը 364-ին կառուցված լինելու տեսակետը: Բուզանդի ու Խորենացու վկայությունները բերում են հետևյալ եզրահանգման.

Արշակունի թագավորները վերաթաղվել են Աղցք գյուղում:

Արշակունի թագավորների վերաթաղումը կատարվել է 364 թվականին:

Հատակագծում Աղցքի դամբարանն ուղղանկյուն սրահ է. արևելյան կողմում խորանն է, իսկ հյուսիսային ու հարավային կողմերում՝ սրահից երկուական սալերով առանձնացված, թաղումների համար նախատեսված կամարակապ խորշերը: Սա փաստի արձանագրումն է. ճիշտ այսպես են տեսել նաև բոլոր ուսումնասիրողները: Սակայն զարմանալի է, անգամ

³ Փ. Բ ու զ ա ն դ, էջ 222:

տարօրինակ, որ չի նկատվել, գուցե և անտեսվել է դամբարանի հորինվածքի և այն Արշակունիներին վերագրելու ենթադրության միջև ընկած բացահայտ հակասությունը:

Անկախ այն բանից՝ պարսիկները կողոպտել էին հեթանոս և քրիստոնյա, թե միայն հեթանոս թագավորների գերեզմանները, նրանք, ամենայն հավանականությամբ, առևանգված ոսկորները պիտի մի տեղ կուտակեին: Կարծում ենք՝ հենց ոսկորների խառնված լինելն էր պատճառը, որ թագավորները չարժանացան առանձին-առանձին գերեզման ունենալու բախտին:

Խորենացու միանշանակ վկայությամբ՝ Արշակունիներին Ազգքում թաղելու միակ պատճառը հեթանոս ու քրիստոնյա թագավորների խառնված ոսկորները միմյանցից զատելու անհնարինությունն էր: Արգ, անկասկած է, որ Արշակունիներին պիտի մեկտեղ մեկ գերեզմանում ամփոփեին: Սակայն փաստն այն է, որ դամբարանը շինված է երկու առանձին գերեզմաններ ունենալու նկատառումով: Այն Արշակունիներին վերագրելու տեսակետը տրամաբանության սահմաններում կտեղավորվեալ այն գեպքում միայն, եթե հեթանոսների ու քրիստոնյաների ոսկորները հնարավոր լինե՞ր ընտրել, բայց Խորենացին ճիշտ հակառակն է վկայում. «Քանզի ոչ գիտացին ընտրել զոսկերս»:

Եթե ընդունենք Բուզանդի վկայությունը, թե Ազգքում թաղվել են միայն հեթանոս թագավորները, ապա այս գեպքում ևս անհեթեթ է մտածել, որ թագավորների ոսկորները երկու մասի բաժանեին և այ՛ն ու ձախ խորշերում թաղեին: Այս առումով անգնահատելի է Աղցքի դամբարանի հատակադձային նմանօրինակ լուծումն ունեցող Իգաձորի (Անի քաղաք) ժայռափոր երկու դամբարանների գոյությունը⁴: Դրանցից հյուսիսայինը սրահի երկու կողմերում էլ թաղման խորշ ունի: Իսկ հարավային դամբարանը թաղման խորշ ունի միայն հյուսիսային կողմում: Պատճառն ավելի քան ակնհայտ է: Ի սկզբանե երկրորդ խորշի անհրաժեշտությունը պարզապես չի եղել, և դամբարանը նախագծվել ու կառուցվել է մեկ գերեզման ունենալու նկատառումով: Արշակունիների դամբարանն էլ, Իգաձորի հարավային դամբարանի նման, պիտի մեկ խորշ, մեկ գերեզման ունենար, քանի որ իրար խառնված ոսկորները՝ լինեին զրանք միայն հեթանոս թագավորներինը (Բուզանդ), թե հեթանոս ու քրիստոնյա թագավորներինը (Խորենացի), միասին, մեկ գերեզմանում ամփոփելը, կամ թե ակամա, դարձել էր պարտագիր պայման:

Ուրեմն, դամբարանի հատակադձային հորինվածքը, ուր թաղումների համար երկու առանձին գերեզմաններ են նախատեսված և իրականացված, ավելի քան բավարար ապացույց է, որ Աղցքի դամբարանը Արշակունի թագավորներինը չէ:

Դամբարանի մուտքի երկու կողմերի քարերը, կամարաքարը, ինչպես նաև խորշերը սրահից առանձնացնող երկուական սալերը քանդակազարդ են: Այս պատկերաքանդակների մեջ չենք հանդիպում ոչ Վաղարշ թագավորի պաշտած՝ Արեգակի, Լուսնի ու իր նախնիների որևէ պատկեր

⁴ Դ. А. К и л ш и д з е. Пещеры Ани. — Материалы XIV Анийской археологической кампании 1915 года. Ереван, 1972, с. 122, 124.

կամ նշան, ո՛չ Արտաշես թագավորի ու իր թագավոր որդի Տիգրանի՝ Ասիայից, Հելլադայից ու Միջագետքից բերած ու մինչ Տրդատի քրիստոնեությունը ընդունելը հայկական պանթեոնի գլխավոր աստվածներ Արամազդի, Անահիտի, Վահագնի կամ մյուս հեթանոս աստվածների որևէ խորհրդանշան: Ավելի տարօրինակն այն է, որ եթե մի կողմ թողնենք Արշակունիների կրոնական պատկանելությունը, ապա թագավորական հորջորջված դամբարանի պատկերաքանդակների մեջ գոյություն չունի թագավորավայել որևէ սյուսե կամ գոնե մեկ ատրիբուտ: Եվ պատահական չէր, որ ուսումնասիրողների թագ կրող մարդ տեսնելու ջանքերը բերեցին նրան, որ արդյունքում ստացանք «կիսահեթանոսական պատկերաքանդակ» մի տերմին, և ի դեմս Հայկ նահապետի՝ մի «մերկ թագավոր»: Ուրեմն, դամբարանի պատկերաքանդակները ևս, ուր չկա թագավորական (հեթանոս թե քրիստոնյա) որևէ սյուսե կամ ատրիբուտ, մատնանշում են, որ դամբարանում թաղվածները Արշակունի թագավորները չեն:

Այսուհանդերձ, Բուզանդի ու Խորենացու մոտ թաղման վայրի հստակ մատնանշումը՝ Աղցք, և բնակավայրում միակ տաճարի ու միակ դամբարանի առկայությունը փաստը պարտադրում են Արշակունիների գերեզմանը փնտրել հենց այս համալիրում: Տեղին է նկատել, որ հայ մատենագիրները Արշակունի ցեղի թագավորների թաղման վայրերը նշելով հանդերձ՝ Անդեղ, Անի, Թորդան, Կոչ, նրանց գերեզմանների տիպի կամ ձևի մասին որևէ տեղեկություն չեն հաղորդում: Այս առումով, իբրև միակ վկայություն, բացառիկ է Երվանդ թագավորի թաղմանը վերաբերող Խորենացու հիշատակությունը. «Բայց Արտաշիսի յիշեալ, թե խառնուած Արշակունևոյ է Երուանդ հրամայէ գդի նորա թաղել մահարձանօք»⁵:

Ուրեմն, բացառելով դամբարանի մեջ թագավորների վերաթաղման հնարավորությունը, գտնում ենք, որ նրանց թաղել են դամբարանի հարավային կողմում: Արշակունի թագավորների իրար խառնված ոսկորներն ամփոփել են մեկ ընդհանուր գերեզմանում և հիշատակը հավերժացնելու համար, կառուցել հուշակոթող՝ «թաղել մահարձանօք», որի ստորին շարքը բարեխտաբար պահպանվել ու հասել է մեզ: Հուշակոթող-մահարձանը կառուցվել է 364-ին, որը թաղման ակտի տարեթիվն է:

Տաճարի արևելյան պատի ու դամբարանի արևելյան աստիճանների տակ ձգվող, նույն քարից, միանման շարվածքով, և ամենակարևորը՝ երկու կառույցների հպման տեղում առանց որևէ կարի իրականացված մեկ ընդհանուր հիմք-հիմնապատի առկայությունն արդեն իսկ մատնանշում է, որ տաճարը և դրան կից դամբարանը նախատեսվել ու կառուցվել են միաժամանակ: Ակնհայտ է նաև, որ հուշակոթողն է կցվել դամբարանին, այլ ոչ թե հակառակը: Այսինքն հուշակոթողը կառուցելու ժամանակ տաճարը և դամբարանը արդեն գոյություն ունեին: Խնդիրը կոնկրետանում է. տաճարն ու դամբարանը կառուցվել են կամ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց՝ 301 թ. մինչև 364 թ. ընկած հատվածում, այսինքն քրիստոնեական շրջանում, կամ էլ 301 թ. առաջ՝ հեթանոսական շրջանում:

⁵ Մ. Խորենացի, Գլ. ԽԵ, էջ 173:

Դամբարանի պատկերաքանդակներին անգրագարձած ուսումնասիրողները, առանց բացառություն, աներկբա մատնանշում են, որ դրանց մեջ կան նաև հեթանոսական սյուսերներ⁶: Մեր հարցազրման դեպքում, անգամ մեկ սյուսերի առկայությունը վկայում է, որ դամբարանը հեթանոսական շրջանի կառույց է: Հակառակ պարագայում կստացվի, որ դամբարանը կառուցվել է հեթանոսական ժամանակներում թաղված աճյունների վերաթաղման համար, և թաղվողներն էլ եղել են բարձրաստիճան այրեր՝ արժանի դամբարան ունենալու պատվին: Այսինքն, Արշակունի թագավորների հետ կապված վերաթաղման եզակի պատմությունը նույնությամբ տեղի է ունեցել նաև 301–364 թթ. ժամանակահատվածում: Մի բան, որ ոչ միայն հավանական չէ, այլ կարծում ենք՝ բացառված է:

Թե ի՞նչն էր պատճառը, որ Արշակունիներին չվերաթաղեցին Անիում՝ ուր դեռևս հեթանոսական շրջանում հիմնադրված իրենց «գերեզմանների թագավորաբնակ կայանն» էր և գերադույն աստված Արամազդի տաճարը, որ 301-ին սրբազործվեց ու ավանի հետ մեկտեղ նվիրվեց եկեղեցու ծառայությունը, թերևս կմնա անբացատրելի: Սակայն գտնում ենք, որ թաղման նոր վայրի ընտրությունն անկասկած պայմանավորված է եղել Աղցքում ևս հեթանոսական շրջանում հիմնադրված նշանավոր սրբավայրի տաճարի ու դամբարանի առկայությամբ: Մտածել անգամ, որ Անիում թաղված Արշակունի թագավորներին վայել կհամարեին վերաթաղել ինչ-որ մի անհայտ վայրում, ուր ոչ տաճար չիներ, ոչ էլ դամբարան, պարզապես չի կարելի: Անուղղակի ձևով այդ է վկայում նաև խորենացին, երբ նշում է, որ քրիստոնյա թագավորներին ցանկացել են թաղել Վաղարշապատում: Արդ, եթե նրանց համար նախընտրել էին քրիստոնյաների նվիրական վայրերից մեկը՝ Վաղարշապատը, ուր գտնվում էին Մայր տաճարն ու սուրբ կույսերի վկայարան-գերեզմանները, ապա հեթանոս Արշակունիներին էլ անկասկած պիտի արժանացնեին հեթանոսական ժամանակներից ի վեր գոյություն ունեցող, համարժեք մի վայրում թաղվելու պատվին: Մանավանդ որ, վերջիվերջո, հեթանոսների հետ ստիպված էին թաղել նաև քրիստոնյա թագավորներին:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ.

1. Աղցք գյուղը գեռևս հեթանոսական շրջանում նշանավոր սրբավայր է եղել:

2. Աղցքի ճարտարապետական համալիրի տաճարը և դամբարանը կառուցվել են հեթանոսական շրջանում: Դրանք միասնական նախագծով և նույն ժամանակահատվածում իրականացված կառույցներ են:

3. Տաճարը հատակագծային հորինվածքով նույնանում է քառամույթ գմբեթավոր կառույցների՝ հետ, և բացառված չէ, որ այն, ի սկզբանե, նաև փայտե կոնստրուկցիաները քարով փոխարինելուց հետո, ունեցել է

⁶ Դամբարանի քանդակները, այդ թվում նաև շրջանի մեջ առնված հավասարաթև խաչապատկերներն արվել են դամբարանի կառուցման ժամանակ՝ հետևաբար հեթանոսական են: Քրիստոնեությունը վերացրեց հեթանոսական բոլոր աստվածությունները և սուրբ երեքանձնյա միասնությունը կնքեց տիեզերքի տեր: Եվ նոր տիրոջը շնորհեց ոչ միայն հեթանոս աստվածների գաղափարներն ու գործառույթները, մասնավորապես հարություն, անմահություն ու տիեզերքի գաղափարը, այլ նաև նրա հեթանոսական խորհրդանիշը խաչը:

գմբեթ և խաչաձև տանիք: Ամեն դեպքում տաճարն իր հատակագծային հորինվածքով ոչ մի աղբյուր չունի եռանավ բազիլիկ կոչվող տիպի հետ:

4. Դամբարանն անկասկած պատկանել է բարձրաստիճան ու նշանավոր տոհմի: Հնարավոր է, որ այստեղ թաղվածներն Արչակունիներ լինեն, բայց ոչ թագավորներ:

5. Արևելյան խորանն ի սկզբանե եղել է հորինվածքում:

6. Դամբարանի բոլոր քանդակները, այդ թվում նաև շրջանի մեջ առնված հավասարաթև խաչապատկերները հեթանոսական են:

7. Արչակունի թագավորները թաղված են Աղցքի ճարտարապետական համալիրում դամբարանի հարավային կողմում: Գերեզմանի վրա կանգնեցված մահարձան-հուշակոթողը կառուցվել է 364 թ.:

8. Հեթանոսական շրջանում գոյություն է ունեցել պաշտամունքային կառույցների, արևելյան խորան ունենալու և արևելք-արևմուտք կողմնորոշման կարգը:

Հայաստանի ճարտարապետական ժառանգության առաջին ուսումնասիրողները եվրոպացի գիտնականներն էին: Հուշարձանները տեղում հետազոտելու և պատմագրական աղբյուրներից բնագրով օգտվելու հնարավորություն չունենալով, նրանք պաշտամունքային կառույցները թվագրեցին՝ ելնելով ծագման ու զարգացման, ազդեցություն և փոխազդեցություն տեսական գրություններից: Եթե սրան հավելենք մեզանում հուշարձանների ոչ միայն ուսումնասիրությունների, այլև փաստագրական նյութի բացակայությունը, եվրոպացի գիտնականների հատուկենտ այցելությունների ժամանակ նրանց ուղեկցողների ու տեղեկատուների, մեղմ ասած, անբավարար տեղյակությունը, ապա հասկանալի կդառնա, որ նրանց աշխատություններում տեղ գտած փոքր ու մեծ սխալներն անխուսափելի էին: Այսուհանդերձ, եվրոպացի գիտնականները մեծ և անուրանալի ավանդ ունեն հայկական ճարտարապետության ուսումնասիրման ու պրոպագանդման գործում¹:

Թ. Թորամանյանը հայկական ճարտարապետության ուսումնասիրության հիմնադիրը, գիտական աշխարհի սեղանին դրեց ոչ միայն Հայաստանի հուշարձանների մանրամասն ու ճշգրիտ նկարագրությունների, չափագրությունների, լուսանկարների, ինչպես ինքն էր բնորոշում «բարեխիղճ ու խնամոտ աշխատությունք պատրաստված հավաքածո մը», այլև առաջադրեց հայկական ճարտարապետության ծագման, զարգացման և փոխանցման իր թեզերը: Թորամանյանին չհաջողվեց հետազոտել անգամ կարևոր հուշարձանների մեծ մասը, սակայն ամենացավալին այն էր, որ նրան բախտ չվիճակվեց ի մի բերել և ամփոփել իր իսկ տեսակետները: Այսօր մեր ձեռքի տակ եղած «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» երկհատորյակը տարբեր ժամանակներում գրված (մի մասն անտիպ) հոգվածների, գրառումների, օրագրերի ժողովածու է, ուր քիչ չեն նույն խնդիրը տարբեր տեսանկյունից քննելու հետևանքով առաջացած տարբեր ու, բնականաբար, իրարամերժ տեսակետները: Այսուհան-

¹ Մեր ուսումնասիրողների կողմից եվրոպացի գիտնականների հասցեին ուղղված «կղերա-բուրժուական», «ֆորմալ-տիպոլոգիական», նմանատիպ ու այլ կարգի հորջորջումները հանիրավի են:

դերձ Թորամանյանի «Նյութերը» մնում է իրրև հայ ճարտարապետությունից պատմության ճակատագրով ապրած, ազնվագույն, «սրատես, հոտառու և հմուտ»⁸ գիտնականի չգերազանցված աշխատություն, նաև դասադիրք: Թորամանյանը, կամա թե ակամա ընդունելով հանդերձ եվրոպացի գիտնականների կողմից կիրառված գրույթները, հայ պատմիչների վկայությունների քննության հիման վրա առաջադրեց այն ժամանակների համար ավելի քան հանդուգն մի տեսակետ, ըստ որի հայկական ճարտարապետական արվեստի առաջին վերածնությունը տեղի է ունեցել նախաքրիստոնեական շրջանում և տեղ է մինչև մ. թ. V դ. վերջը⁹: Ավելին, նա գտնում էր, որ հեթանոսական շրջանի մի շարք մեհյաններ հասել են մեզ. «Ըստ իս Տեկորի, Քասաղի տաճարները պարզապես մեհյաններ են, իսկ մնացածները, եթե ոչ մեհյաններ, դոնե մեհենական ձևերու ազդեցություն տակ կանգնված հայոց քրիստոնեության նախնական տաճարներ, թեև ավելի հավանականը, ըստ իս, այն է, որ մյուս նմաններն ալ հեթանոսական շենքեր էին...»¹⁰:

Սակայն սրա հետ մեկտեղ Թորամանյանն առաջադրեց նաև մի թեզ, ըստ որի կրիստոնեական խորանը, դմբեթը, ավանդատունը և արտաքին սրահը Հայաստան են եկել V դ.: Սա էր միակ պատճառը, որ Տեկորի, Երեբունյքի, Քասաղի, Աշտարակի կառույցներում առկա վերոհիշյալ տարրերը նա համարեց հեթանոսական այդ տաճարներին քրիստոնեության շրջանում արված հավելումներ, իսկ էջմիածնի 301 թ. կառուցված Մայր տաճարը՝ V դ. շինություն: Աղյքի համալիրում ևս Թորամանյանը խորանը դիտեց իբրև հեթանոսական դամբարանին V դ. արված հավելում. «Դամբարանը նախաքրիստոնեական լինելու ամեն հավանականություն ունի, բացի արևելյան կողմի փոքրիկ կրիստոնեական խորանը, որն ավելի ուշ ժամանակ քրիստոնեականի վերածելու նշաններ ունի»¹¹: Իսկ տաճարը, որ ուներ խորան ու նաև ավանդատուն, համարեց V դ. կառույց. «Դամբարանին մոտիկ կա մի հին եկեղեցու մնացորդ, որուն փլատակների բեկորները ցույց են տալիս, որ 5-րդ դարուն կանգնված մի եկեղեցի է եղած»¹²:

Թորամանյանից հետո ուսումնասիրողները հիմնականում որդեգրեցին նրա վերը նշված թեզը: Սակայն անտեսեցին և երբեք չանդրադարձան Թորամանյանի սլատմական տեղեկությունների հիման վրա արված, մեր կարծիքով, այն հիմնարար տեսակետին, որ հայկական ճարտարապետության առաջին վերածնունդը տեղի է ունեցել նախաքրիստոնեական շրջանում, և մեզ հասած հուշարձանների մեջ կան նաև հեթանոսական մեհյաններ: Փաստորեն մերժեցին ու գտան, որ Երեբունյքի, Տեկորի, Աշտարակի և նմանատիպ մյուս կառույցները ոչ թե հեթանոսական մեհյաններ են՝

⁸ Օ. Շուկալին տված թ. Թորամանյանի բնորոշումն է:

⁹ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Երևան, 1942, էջ 41:

¹⁰ Նույն տեղում, էջ 210-211:

¹¹ Նույն տեղում, էջ 40:

¹² Նույն տեղում, հ. II, էջ 112: Կարևոր ենք համարում նշել, որ համալիրի մանրամասն ուսումնասիրությունը հնարավոր դարձավ միայն 1974-ին՝ ավերակների մաքրման և պեղման աշխատանքներից հետո: Եվ թերևս այդ էր պատճառը, որ դամբարանին հպված ու միաժամանակ կառուցված տաճարը թ. Թորամանյանը համարեց «մոտ» և տարբեր ժամանակներ:

քրիստոնեությունից շրջանում հավելված տարրերով, այլ V դ. հիմնադրված քրիստոնեական եկեղեցիներ: Գտան նաև, որ V դ. առաջ կառուցված ոչ մի պաշտամունքային շինություն, մեհյան կամ եկեղեցի, բացի Գառնիի տաճարից, ընդհանրապես մեզ չի հասել, և պահպանված շինությունները «պարզից բարդ» շարելով խցկեցին V–VII դդ.: Իսկ Գառնիի տաճարից մինչև V դ. առաջացած կատարյալ դատարկությունը «լցրեցին» պատմական տեղեկությունների և պարզ տրամաբանության հետ որևէ առնչություն չունեցող մի նոր տեսակետով, թե հեթանոսական տաճարները իսպառ ոչնչացվել են Տրդատ արքայի ու Գրիգոր Լուսավորչի, իսկ քրիստոնեական անդրանիկ եկեղեցիները՝ պարսիկների կողմից:

Արդյունքն ակնառու է. ուսումնասիրողները կառուցում առկա փաստերը և պատմական վկայությունները կա՛մ սխալ են ըմբռնում, կա՛մ էլ պարզապես հարմարեցնում են իրենց տեսակետին: Դրա ցայտուն ապացույցն Աղձքի համալիրն է և էջմիածնի Մայր տաճարը: Վերջինիս մասին հայտնած կարծիքներում սխալ մեկնաբանվեցին ոչ միայն Ադաթանգեղոսի ու Ղազար Փարպեցու վկայությունները, այլ նաև խորանին հպված, բացահայտորեն հետազայում կցված քարերի շարքը, այն համարելով «Հնագույն խորանի» մնացորդ¹³:

Էջմիածնի Մայր տաճարի 301 թ. կառուցված լինելու հանգամանքը մեզ բերել էր այն հաստատ համոզման, որ քրիստոնեական շրջանի ճարտարապետության ծագման ու զարգացման պատկերը, ինչպես նաև բազմաթիվ հուշարձանների թվագրումներն անընդունելի են, և վաղ միջնադարի ճարտարապետության պատմությունը հարկ է վերանայել¹⁴: Աղյքի համալիրը հաստատում է այս կարծիքը: Ավելին, Աղյքի տաճարը հնարավորություն է ընձեռում վերանայելու նաև 301 թ. առաջ գոյություն ունեցած ճարտարապետության մասին մեր պատկերացումները: Խնդիրը բավական բարդ է: Այսուհանդերձ, այն լուծելու գլխավոր պայմանը ճիշտ ճանապարհի ընտրությունն է: Առաջին քայլն արդեն կատարված է, այն էլ շուրջ մեկ հարյուրամյակ առաջ թ. Թորամանյանի կողմից: Գտնում ենք, որ էջմիածին–Աղյք–Տեկոր, Երեբունյք–Գառնի հենակետային տաճարները հնարավորություն կտան ճանաչել հեթանոսական շրջանում կառուցված, սակայն այսօր քրիստոնեական համարվող մյուս հուշարձանները ևս: Եվ ճարտարապետության պատմության մեջ տեղ կգտնի մի նոր գլուխ՝ «Հայաստանի հեթանոսական շրջանի պաշտամունքային շինությունները» վերտառությունը:

¹³ Վ. Գրիգորյան, Էջմիածնի Մայր տաճարը. «Լրաբեր հասարակական գիտություններ», 1980, № 7, էջ 77–85:

¹⁴ Նույն տեղում, էջ 79: Տես՝ Վ. Գրիգորյան, Հայաստանի վաղքրիստոնեական պաշտամունքային կառույցների թվագրման խնդրի շուրջ (Երեբունյքի և Տեկորի բազիլիկների հիմնադրվելը հեթանոսական շրջանում որպես մեհյաններ). – Հայագիտական միջազգային համաժողով, Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները (գեղուցումների դրույթներ). Երևան, 2003, էջ 172–173:

АРХИТЕКТУРНЫЙ КОМПЛЕКС СЕЛА АХЦК

В. Г. ГРИГОРЯН

Резюме

В исследованиях, посвященных армянской архитектуре и скульптурным рельефам, доминирует точка зрения, что храм, мавзолеей и стела Ахцского комплекса являются строениями христианского периода. Безоговорочно утверждается, что мавзолеей, датированной 364 г., принадлежит царям Аршакидам. В свидетельствах Павстоса Бузанда и Мовсеса Хоренаци, единственных историков, писавших о погребении Аршакидов, ничего не сказано о мавзолее, строившемся в Ахцке, что опровергает общепринятую точку зрения, приписывающую мавзолеей Аршакидам, как и дату построения мавзолеей. Расхищенные кости царей были перемешаны, поэтому их погребение в одной могиле поневоле стало неизбежным. Однако мавзолеей, приписываемый Аршакидам, изначально был построен для двух отдельных захоронений. Значит, композиционный план мавзолеей является более чем достаточным доказательством того, что мавзолеей в Ахцке не принадлежит Аршакидам. Отсутствие в декоративном убранстве мавзолеей какого-либо царственного сюжета или атрибута, в свою очередь, указывает на то, что похороненные в мавзолеей – не цари. Свидетельства историографов, композиционные особенности памятника, а также исследование скульптурных рельефов приводят к следующим заключениям:

– Село Ахцк было известным святилищем еще в языческие времена. Храм и мавзолеей были построены по единому плану в один и тот же языческий период.

– В композиционном плане храм отождествляется с четырехпилонными купольными памятниками, и не исключено, что он изначально, также после замены деревянных конструкций камнем, имел купол и крестообразное перекрытие.

– Мавзолеей, несомненно, принадлежал высокопоставленной и известной династии. Возможно, погребенные там – Аршакиды, но не цари.

– Цари Аршакиды погребены на южной стороне мавзолеей в одной общей могиле. Была воздвигнута стела для увековечения их памяти. В точности так, как по единственному свидетельству историографических источников, был погребен Ерванд Аршакид по приказу царя Арташеса: "похоронить с надгробными памятниками". Стела – надгробный памятник – была построена в 364 г., что является датой акта погребения.

THE ARCHITECTURAL COMPLEX OF THE VILLAGE OF AKHTSK

VAHAGN GRIGORYAN

S u m m a r y

A viewpoint dominates in the studies on the architecture and sculptural reliefs of Armenia that the temple, mausoleum and stela in the complex of Akhtsk are structures of Christian period. The mausoleum is unreservedly thought to belong to the Arsacid kings and to have been built in 364, and this assertion is presented as a historical fact. In the evidences by Pavstos Buzand and Movses Khorenatsi, the only historians who mentioned the burial of the Arsacid kings, nothing is said about a mausoleum being built at Akhtsk. Thus, the accepted viewpoint of attributing the mausoleum to the Arsacids is rejected as a groundless interpretation of historical evidence. In connection with this, it is also disproved that the mausoleum was built in 364. The kings' plundered bones had been mixed up together, and burying them in one grave had involuntarily become inevitable. However, the fact is that from the very beginning, the mausoleum attributed to the Arsacids was envisaged and built with the purpose of having two separate graves. Thus, the ground plan composition of the mausoleum at Akhtsk is more than sufficient to prove that it does not belong to the Arsacid kings. The absence of any kingly iconographic plot or attribute, in its turn, points to the fact that those buried in the mausoleum are not kings. Evidences by historians, compositional peculiarities of the complex, as well as the examination of sculptural reliefs lead us to the following conclusions:

- The village of Akhtsk had been a renowned sanctuary as far back as heathen times. The temple and the mausoleum were built in heathen times and were structures carried out within a common plan and at the same period of time.
- In its ground plan, the temple resembles four-piered domed monuments, and it is not excluded that from the very beginning and also after replacing wooden constructions with stone, it had a dome and a cruciform roof.
- Undoubtedly, the mausoleum belonged to a high-ranking and outstanding family. Those buried there might be of the Arsacids, but they were not kings.
- The Arsacid kings are buried in the southern part of the mausoleum. The mixed up bones were buried in one shared grave, and a stela was erected to commemorate the kings. Just in the same way as, according to the only evidence in historiographic sources, King Yervand Arsacid had been buried by the order of Artashes - "with burial stela". Thus, the stela was built in 364, which is the date of the burial.